նէր, չէ՞ր կարող կազմել տալ օրինակներ մեզ թողնել:

Մեր վարդապետ եւ միաբանակեաց կղերը գեղարուեստօրէն նկարագրել են փափկասուն տիկինների, օրիորդների հագուստի կերպասները, ասեղնագործերը, ոսկի ու գոհարի զարդերը, մարգարտի տեսակները. բայց մոռացել են մեզ բացատրելու աշխատաւորի եւ երկրագործի առտնին վիճակը, տուած հարկերի եւ տուրքերի տեսակները, կատարած բէգեարների չափը. մի խօսքով սարկի, սպայի, ոստանիկի եւ նախարարների յարաբերութիւնները: Անշուշտ եթէ այդ վարդապետներից պահանջէին, ամենայն ճշտութեամբ դրանց նկարագիրն էլ կ՚ունենայինք: Այսօր հայ մագաղաթների թիւը մի քանի տասնեակ հազարներ են հաշւում, բացի կորածներից ու վառուածներից, հողի տակ փտածներից եւ Բաղդադի բաղնիսներում կրակարանների մէջ այրուածներից. սակայն մնացորդ շուրջ 40.000 հատոր ձեռագիրները դարձեալ մեծ գանձ է: Բայց այս 40.000 հատորների մէջ երկրի, ժողովրդի վիճակի նկարագրութիւնը հազիւ թէ մի–երկու հարիւր օրինակից աւելի լինի, այն էլ յայտնի պատմագիրների ընդօրինակութիւններն են, խնամքով պահպանուած. մնացեալները բոլորն էլ կրօնական–եկեղեցական գրքեր են:

ԺԸ. եւ ԺԹ.րդ դարում մեր վերա–